



Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԴՍԵՂԻ ԲԱՐՁՐԱՔԱՇ Ա. ԳՐԻԳՈՐԻ ԵՎ ՔԱՌԱՍՆԻՑ
ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՄ՝
ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ
ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Վերջինս քաղկացած է միայն մեկ եկեղեցուց, որն իրենից ներկայացնում է «գմբեթավոր սրահներ» տիպին պատկանող միջին մեծությամբ մի կառուցվածք՝ երկարածիգ, ուղիղ քառանկյունի հատակագծով: Քառանկյունու արևելյան ծայրում մշակված է կիսակլոր արսիղը բարձր բեմով, որի երկու կողմերում կան երկհարկանի խորաններ: Ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք, եկեղեցու մեջ, իսկ վերի հարկի խորանների մուտքերը՝ արսիղի մեջ, իրար դիմաց:

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով և գեղաբանդակ պարակալով (շրջանակ):

Թե երբ է կառուցվել Քառանցից Մանկանց վանքը, ստույգ հայտնի չէ, պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ մենաստանի մասին: Եկեղեցու ճակատակալ քարի վրա փորա-

գրված արձանագրությունը (արձանագրություն խ) հավաստում է, որ Հաղբաւոյ վանքի առաջնորդ Տէր Համազասպը 1256 թվականին օրհնում է եկեղեցին և նվիրաբերություններ անում: Չնայած դրանից կարելի է այն հետևությունն անել, որ եկեղեցու կառուցումը պետք է ավարտված լինի հենց 1256 թվականին, որից հետո էլ տեղի ունեցած լինի եկեղեցու օծումը, բայց որովհետև եկեղեցու վրա փորագրված մի այլ արձանագրություն (արձանագրություն խԵ) ունի 1241 թվականը, ուստի նրա կառուցումը 1256 թվականին վերագրելը անհավանական է դառնում:

Եկեղեցու շենքն այժմ կիսավեր վիճակում է. ամբողջապես քանդված է գմբեթը, ծածկի մի մասը, թափված է երեսպատ քարերի որոշ մասը: Ունեցել է բազմաթիվ արձանագրություններ, որոնց մի նկատելի մասն այժմ խիստ եղծված ու անընթեռնելի վիճակում է, մի մասն էլ փլատակների մեջ թափված բեկորների վրա:

Նկատվում է մի շարք վերանորոգումների

* Ծառուկայից «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի № Ա-ից:

հետքեր, որոնց ընթացքում եկեղեցու վրա շինարարվել են այլ շենքերի բեկորներ, ուստի քանդակագործի ու արձանագրության մասերով: Այդ հանգամանքը ինքնին վկայություն է այն բանի, որ այստեղ, բացի կանգուն մնացած եկեղեցու այդ մեծափոր շենքից, գոյություն են ունեցել նաև այլ կառուցվածքներ, որոնք ժամանակի ընթացքում հիմնովին ավերվել են և որոնց բեկորներն զտաագործվել են եկեղեցու վերանորոգման ժամանակ:

Եվ իրոք, եկեղեցու արևմտյան պատի վրա փորագրված մի արձանագրության համաձայն (արձանագրություն ԼԵ) ոմն Խաչատուր կառուցում է ժամատուն և սալահատակում եկեղեցին: Վերը հիշված 1241 թվականը կրող արձանագրության մեջ էլ նշվում է, որ ոմն Դավիթ տուն է կառուցում այստեղ: Սակայն արձանագրության մեջ որոշ չէ, թե ինչ տուն է կառուցում՝ վանքի միաբանության համար բնակելի շենքեր, եկեղեցի, թե՛ մի այլ կառուցվածք: Բացի վերը նշվածներից, եկեղեցու հարավային կողմում պահպանված փյառակները ենթադրել են տալիս, որ այստեղ նույնպես պետք է գոյություն ունեցած լինի որևէ կառուցվածք:

Այդ տեսակետից առանձնապես հետաքրքիր ու բնորոշ է եկեղեցու հարավային կողմի ստորին հարկի խորանի մուտքի վերին մասում փորագրված Աշոտ և Նսե ամուսինների արձանագրությունը (արձանագրություն ԽԳ), ըստ որի նրանց նվիրատվության դիմաց վանքի միաբանությունը խոստանում է ամեն տարի Աստվածածնի տոնի պատարագը բոլոր եկեղեցիներում նրանց անունով կատարել: Հասկանալի է, որ բացի ներկապիս կանգուն միակ եկեղեցուց, այստեղ գոյություն է ունեցել նաև ուրիշ եկեղեցի:

Այս բոլորից միանգամայն պարզ ու որոշակի է դառնում, որ Քառասնից մանկանց վանքը բաղկացած է եղել ոչ թե մեկ հատիկ, այլ մի խումբ հուշարձաններից:

Եկեղեցու առջևում տարածվում է մեծ գերեզմանատունը, որ աչքի են ընկնում մի շարք մահարձան-խաչքարերը՝ պատած շքեղագործ քանդակներով: Հատկապես ուշագրավ է եկեղեցու հարավային կողմում, արևմտյան պատի ուղղությամբ՝ կից կանգնեցված մեծ մահարձան-խաչքարը: Իսկ ձորալանջի հարթության վրա նկատելի են բազմաթիվ շենքերի հետքեր, որպիսի հանգամանքը վկայում է, որ հնում այստեղ բնակավայր է եղել:

Դսեղ գյուղի սահմաններում, բացի Բարձրաբաշ և Գրիգորի և Քառասնից Մանկանց վանքերից, առանձնապես ուշադրության արժանի է **Գյուղամիջի մեծ գերեզմանատունը**՝ իր բազմաթիվ մահարձաններով, խաչքարերով, կոթողներով


ու այլ կառուցվածքներով: Հատկապես կարելի է աչտեղ **բագիլիկատիպ փոքրիկ եկեղեցին**, որը նշանակալից է ոչ միայն իր հնությանը ու ճարտարապետական կառուցվածքով, այլև նրանով, որ նրա վրա փորագրված է կառուցման տարեթիվը՝ Հայոց ՇԳ (654) թվականով: Դա բացառիկ երևույթ է հայ վիճագրության պատմության մեջ, որովհետև, ինչպես հայտնի է, հայ գրերի գյուտից հետո՝ սկզբնական դարերում կատարված կառուցվածքների վրա գրավոր հիշատակություններ չէին փորագրում:



Նկար 6. Դսեղ-Թումանյան.—Խաչկոթության խաչքար-մահարձանը

Այստեղ առանձին ուշադրության արժանի է նաև **Գրիգորի մահարձան խաչքարը**, որը կանգնեցրել են Խաչիկի որդի Տիրուրը և իր եղբայրները՝ 24 (1281) թվականին, ինչպես այդ մասին վկայում է նրա պատվանդանի վրա փորագրված տապանագրությունը (արձանագրություն ԽԶ): Խաչքարի վրա քանդակված են բազմաթիվ սրբապատկերներ՝ համապատասխան մակագրություններով, որոնք ամփոփված են վերին աստիճանի նուրբ ձևով մշակված բուսական ձևերի միահյուսված քանդակներով: Խաչքարի կենտրոնա-

կան մասում պատկերված է Քրիստոսի խաչելությունը, որի պատճառով ժողովրդի ու գրականության մեջ այն հայտնի է «Խաչելության խաչքար» անունով (նկ. 6):



Նկար 7. Դսեղ-Թումանյան.— Կոթող-մահարձան գյուղամիջի մեծ գերեզմանատանը

Գերեզմանոցում եղած մյուս կարևոր հուշարձանը **մահարձան-կոթողն է**, որի պատվանդանի մասը եռակարգ է՝ շարված խոշոր քարերից, իսկ կոթողը քառակող է, քարձր, որի թուր կողերը պատած են բուսական զանազան ձևերի շքեղ զարդաքանդակներով, ու սրբապատկեր-քարձրաքանդակներով, որոնք բնորոշ են 2—Է դարերին (նկ. 7):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում գյուղամիջի **ս. Սարգիս կոչվող եկեղեցին**, որը Մամիկոնյան իշխանների՝ աչտեղ կառուցած առաջին մոնումենտալ շենքն է, երբ նրանք դուրս գալով իրենց բուն հայրենի երկրից՝ Տարոնից, գալիս և բնակություն են հաստատում Դսեղ գյուղում:

Եկեղեցու կառուցման ամսական ձևը եղել է կենտրոնագմբեթ, խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչքաներով, որը խիստ

բնորոշ է Է դարին: Սակայն հետագայում այդ շենքը քանդվում է՝ կանգուն մնալով միայն արևելյան խաչքանը և, միայն ԺԹ դարում ցանկանալով վերականգնել այն, նրա կանգուն մնացած մասը, որը հանդիսանում էր հին եկեղեցու արևելյան աբսիդը՝ արևմտյան կողմում, կից կառուցում են նոր սրահ՝ փայտածածկ տանիքով և դարձնում օգտագործելի եկեղեցի:

Հին եկեղեցուց պահպանված մասի արևելյան պատի ճակատի մասում քանդակված է Մամիկոնյան իշխանների տոհմանիշը՝ երկգլխանի արծիվը՝ գառը ճանկերում բռնած:

Գյուղի սահմաններում եղած հուշարձանների շարքում իր առանձին տեղն ունի Տերունական կոչվող մահարձանը, այն գտնվում է Սաղու ձորի ձախ ձորաեզրին, դեպի հարձրաքարշ ս. Գրիգորի վանքը տանող ճանապարհի ձախ կողմում և, ինչպես երևում է նրա վրա փորագրված արձանագրությունից, կառուցել է Թերի որդի Հայրադեղը՝ իր, իր եղբայր Ապարեկի և իրենց ծնողների հիշատակին: Մահարձանը շարված է մասիվ ձևով, պատվանդանավոր է, վեղարաձև տանիքով. երեք կողմից հարթ է, իսկ մի կողմը գոգավոր, ուր ագուցված է մի մեծ, շքեղազարդ ու գեղաքանդակ խաչքար, որի գեղեցիկ քանդակների պատճառով ժողովուրդը նրան «Սիրուն խաչ» է կոչում:

Դսեղ գյուղի սահմաններում, բացի վերը նկարագրած հուշարձաններից, կան մշակույթի ուրիշ շատ հուշարձաններ, որոնք ուսումնասիրման առանձին նյութ կարող են դառնալ:

ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թե ինչ թիվ են կազմել վանքերի վրա փորագրված արձանագրությունները, ճշտիվ որոշել հնարավոր չէ, որովհետև նրանց կառույցների քիչ մասն են կանգուն վիճակում, իսկ մյուս մասն ավերված ու փլատակների է վերածված, որոնց վրա նույնպես փորագրված են եղել բազմաթիվ արձանագրություններ: Այստեղ մեջ ենք բերում կանգուն մնացած մասերի վրա փորագրված, պարզ ընթեռնելի արձանագրությունները և փլատակների մեջ, առանձին բեկորների վրա եղած նկատելի արձանագրությունները՝ վերծանված ձևով, անհրաժեշտ կետադրությամբ և տողադարձի նշաններով, պահպանելով տողաշարերի հիմնական կարգը:

Արձանագրությունները մեջ ենք բերում ըստ առանձին հուշարձանների՝ վերը նկարագրածի համապատասխան, ճախ արտաքին, սույա ներսի մասերում փորագրվածները:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

Աստվածածնի անվան փոքր եկեղեցի

Ա. Արևելյան պատի վրա, արտաքուստ.

1. Զալպեքն և կենակից յուր խորիշան միաբան-
2. եցան եկեղեցոյս: Եւ ես Տիրացու վարդապետ և միաբանքս ընկ-
3. ալաք զսոցա յոյսն և տվաք երկու պատարաք սուրբ Յակոբին
4. շարաթին: Ով խափանե դատի ի Տեառնէ, եւ կատարիչքն արհնին:

Բ. Նույն տեղում.

1. Ես Սարգիս ծառա Տեառն յիշեցի
2. զահեղ արն Տեառն. ետու զիմ հոգու պա-
3. շարն յեկեղեցիս՝ յառաջն-
4. որդութեան Տիրացու վարդապետին և Յակոբա.
5. Եղբարք ետուն մեկ ար պատարաք ի
6. տանի արքոյն Սարգսի. որ խափանէ դա-
- տի և Տեառնէ:

Գ. Նույն տեղում.

1. Ի ՈԿԵ թվիս Հայոց (1213).
2. Ես Գրիգոր, որդի Աշոտոյ իմ հաւր տված հո-
3. ղն և ալ յաւելի եկեղեցիս և սպասաւոր-
4. րքն ետուն ի սուրբ Սարգսի տանին երեք պատարաք՝ մին Ա-
5. շոտոյ, մին խոշորիցն և մինն ինձ՝ Գրիգորի: Արդ՝ որ
6. զծամն կամ զհոգս խլէ: ՅԺԸ: սուրբ հայրապ-
7. ետացն նզոված է, և մեր մեղացս պ-
8. արտական առաջի Աստուծոյ. ամեն:

Աստվածածնի անվան մեծ (գլխավոր) եկեղեցի

Դ. Հարավային պատի վրա, արտաքուստ, մուտքի արևելյան կողմում.

1. Թու. (Հայոց) ՈՀ (1221).
2. Ի թագավորութեան Գէորգա՝ որդոյ Թամարին և յիշխանութեան մեծ Իւանէ Աթաբակին և նորին զաւակաց՝ Աւագին և Շահնաշահի, ես Սարգսյան, որդի
3. Սարգսի, թոռն Համազասպեան՝ յազգե Մամիկոնեանց, սկսա շինել զԲարձրաբաշս վանք և գերեզմանատեղ ինձ և զամենայն յեկեղեցիքս՝ յիմ հալալ արդեանց:
4. Ծիւնեցի և զԾաղկոտն՝ զիմ հայրենիքն՝ զանձագին արարի. և զՍերեկագոմս, որ աւերակ էր՝ շինեցի և աւանդեցի եկեղեցոյս, և յողջաբերդ այգի մեծ. եւ
5. զարդարեցի սպասիւք, նշանիւք, խաչիւ և գրեմաւք (արժա)նի: Եւ զերկու եկեղեցիքն՝ զաւագ բեմն ինձ պատարագել զԲրիստոս հանապազ, և զջրարհնեացն արն

6. Մամքանա՝ ամուսնո իմո: Որ խափանել ջանա կամ (զծամն չառնէ) և հանել յեկեղեցոյ՝ կամ յիմոց կամ յոտարաց, մեր ամենայն ազգի մեղաց և խղճի պայտակ-
7. ան եղիցի (առաջի Աստուծոյ, Յուդայի և Կայեղի մասնակից է: ՅԺԸ: հայրապետաց նզովեալ եղիցի): Եւ որ պահէ զաւանդս՝ յԱստուծոյ և ի սրբոցն նոցին արհնեացին. ամեն:

Ե. Նույն գլխավոր եկեղեցու արևելյան պատի վրա, արտաքուստ:

1. Ի թու. ՈԶԸ (1239). Ես Համիկ, որդի Սմբատա և թոռն Համազասպա, յազգե Մամիկոնեաց, կրկին միաբանեցա իմ գերեզմանատանս և ամուսին իմ Մամքան, և ետու Աստուածածինս Տանական և զԿարմիրքարն
2. իւր ամէն եռանդով. եւ հաստատեցին ինձ յիշատակ մատուոն մի, զոր յիմ յանուն շինեց և ետ ինձ հարեղբայր իմ Մարգարիս, որ անխափան մեր լինի պատարագն՝ որ անդ լինի՝ երկուսը Մամքան-
3. ալ արնեն ի շաբաթն: Եթէ ոք՝ յիմոց կամ յաւտարաց, ի մեծաց կամ ի փոքունց զգեղն խլէ կամ հակառակ կա, և զմեր հիշատակն խափանէ, Յուդայի և խաչահանութեան մասնակից է,
4. ՅԺԸ: հայրապետացն նզոված է, մեր ազգի և մեր մեղացն պարտական է առաջի Աստուծոյ: Եւ ես՝ Տիրացու վարդապետ ամեն եղբայրութեամբս ընկալալ զսոցա յոյսն և հաստատեցի արձանագրով:

Որ կատարէ արհնի յԱստուծոյ. ամեն:

Զ. Նույն տեղում նախորդից ներքև.

1. Ես Համիկ և Սարգուն կատարեցաք զանդարձ ծնողաց մերոց և տուաք զՉորաուանցո կեան եկեղեց-
2. իս. եւ սպասաւորք սորալ խոտացան չորս սար պատարաք ի տանի հաւքարձմանն՝ երկուսը նրճսին և երկուսը Աղուտին: Կատարիչք
3. արհնին յԱստուծոյ: Եւ որ հակառակ կալ և զգեղ խլէ յեկեղեցոյս՝ իմոց կամ յաւտարաց և զմեր ծամն
4. խափանէ, մեր ազգի և մեր մեղացն պարտական է առաջի Աստուծոյ և առցէ նզովս ի Բրիստոսէ:

Է. Նույն տեղում, նախորդից դեպի հարավ.

1. Ես Տիկին, դուստր Զուտկանն և կենակից Ըռատիա
2. միաբանեցա սուրբ ուխտիս՝ յառաջնորդութեան Տիրացու վարդապետ-
3. ին և ետու ի կարեաց ժամու հիսուն դեկան, եւ սպասաւորքս իս-
4. ուստացան ինձ պատարագել զԲրիստոս յանուն իմ ի տանի սուրբ կուսին Թեկղի՝ յամեն եկեղեցիքս: Կատարիչքն արհնին յԱստուծոյ:

Ը. Նույն տեղում, հարավային վերին խո-
րանի պատի վրա.

1. Ի թու. Ո. Ը. (1159). Եւ Մարկոս ծառա
Աստուծոյ և ամուսին
2. Իմ Շուշիկ միաբանեցաք վանացս և գմեր
3. հոգո բաժին տվաք յեկեղեցիս. Եւ սպա-
սաւ-
4. որք տրայ խոստացան ի տարոջն երկու
ար պատար-
5. ազ մեզ՝ ի տանի սուրբ խաչին: Ով յա-
փանէ դատի
6. յԱստուծոյ և մեր մեղացն պարտական է:

Թ. Նույն տեղում, նախորդից ներքև.

1. ՈՂԷ (1248 թվ.) Եւ Առոժ, որդի Գաղ-
կանց Ասլկանն և ամուսին իմ Մամա
միաբանեցանք
2. և տվաք յԱստուածածին գմեր հոգո բա-
ժինն՝ յառաջնորդութեան Տիրացու վար-
դապետին.
3. Եւ խոստացան մեզ յամեն ամի, ի տանի
Քառասնիցն պատարագ՝ որ յինի այն
արքն՝ ի մեր յանուն արնեն. Եւ արհմին
յԱստուծոյ:

Ժ. Դարձյալ գլխ. եկեղեցու արևելյան պա-
տի վրա, արտաքուստ.

1. Ի թվ. ՈԶԵ (1236).
2. Եւ վասակ ծառա Տեառն
3. յիշեցի զահեղ ար Տեառն.
4. Ետու զիմ հոգո պաշարն եկե-
ղեցիս՝ յառաջնորդութեան Տիր-
6. ացու վարդապետին: Եղբարքս Ետուն մեկ
7. պատարագ ի տանի Իգնատիոսի:
8. Որ խափանէ դատի յԱստուծոյ:

ԳԱՎԻԹ-ԺԱՄՍՏՈՒՆ

ԺԱ. Հարավային պատի վրա, արտա-
քուստ, մուտքից արևելք.

1. Թու. ՈՀ (1221).
2. Ի թագավորութեան Գեարգեա, որդոյ
Թամարին և յիշխանութեան Աթապակ
Իսանէի և զաւակաց նորա Աւագին և
Ծահնշահի, Եւ Մարծպան՝ որդի Սարգսի,
թոռն Համազասպեանց,
3. յազգէ Մամիկոնեանց շինեցի զվանքս և
զամեն եկեղեցիքս յիմ հալալ արդեանց
և արարի ինձ տուն և գերեզմանատեղի և
զավակաց իմոց և ազգականաց. Եւ
գԾաղկոտն,
4. որ էր իմ հայրենիք՝ զանճագին արարի, և
Սերեկագոմս (որ) աներակ էր, շինեցի և
աւանդեցի եկեղեցոյս, Եւ յողջաբերդի աչ-
գի մեծ: Եւ զարդարեցի մեծագին և
պատուական տպափք, խաչիւք և մա-
սամքք,
5. և գրեմարք. Եւ կարգեցի զերկու աւագ
բեմն պատարագէ Գրիստոս յիմ անուն՝
անխափան՝ Զրարհնէք արն Մամբանա՝
ամուսնո իմո: Արդ, որ հակառակ կա գե-

ղի կամ կուպարի, խել և հանել յեկե-
ղեցոյս՝

6. ազգի և մեր մեղացն պարտական եղիցի
առաջի Աստուծոյ, Կաւնի և Յուդայի մա-
նակից է, :ՅԺԸ: հայրապետացն նզով-
եալ եղիցի: Եւ որ հաստատ պահէ զա-
ւանդս, արհմնեալ եղիցի առաջի Աստու-
ծոյ:

Այս արձանագրութիւնը սկզբում փորա-
գրված է եղել գլխավոր եկեղեցու հարավա-
յին պատի արտաքին երեսի վրա (արձանա-
գրութիւն Դ), բայց որովհետև զավիթը կա-
ռուցելիս այն պիտի ծածկվէր, ուստի ար-
տափորագրել են զավթի հարավային պատի
արտաքին երեսին՝ կատարելով որոշ փոփո-
խութիւններ:

ԺԲ. Նույն գավթի արևելյան պատի վրա,
արտաքուստ, արքիդի դուրս շէշոված մա-
սից դեպի հյուսիս.

1. Թու. ՈՂԴ (1245). ի յառաջնորդութեան
Տիրացու վարդապետին, Եւ Ասլանբէկ,
որդի Մարծպանա շինեցի զերկու մա-
տոռնա՝ մեկը յանուն Մլըքանա՝ ամուսնո
իմո և տուի զ...
2. Հսան և վեց դեհեկան տարեմն յակոսա-
բոյս, և մեծածախ անտարան՝ ոսկով և
մարգարտով և ակամքք պատականաւք
զարդարած, Եւ հաստատեցի արձանա-
գրով
3. անխափան մինչ ի գալուստն Բրիստոսի:
Արդ, եթէ որ յիմոց կամ յաւտարաց հա-
կառակ կա և զինչ տուել եմ խել, կամ
գժամն խափանէ, մեր խղճի և մեղաց
պարտական է և առցէ նզովս
4. յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա, ա-
մեն:

ԺԳ. Նույն տեղում, արքիդից դեպի հա-
րաւ.

1. Ի թու. ՈԶԶ (1237). յառաջն(որդութեան
Տիրացու վարդապետին, Եւ) Աշոտ, որ-
դի Գարգէ միաբանեցա վանիցս և Էտու
յԱստուածածինս երկու մեծ կոռավար և
հաստատեցի արձանագրով՝ միջն-
2. որդութեամբ Աստուծոյ (և կամեցողու-
թեամբ եղբար իմո Ասլ)անա. Եւ սպա-
սաւորք սուրբ ուխտիս Էտուն ինձ քա-
ռաւուն պատարագ ի տարոջն, և երկու
ար Ասլանա: Արդ, եթէ որ հակառակ կա
գրելոյս և զհո-
3. ղն խել ջանա և հ(անել վանիցս և մի)-
աբանութիւնս խափանէ՝ յիմոց կամ յա-
տարաց, իմ և իմ ազգի մեղացն պարտա-
կան է առաջի Աստուծոյ, Կաւնի և Յու-
դայի մասն-
4. ակից եղիցի, :ՅԺԸ: (հայրապետացն
նզոված է...) աւացի նոր կիրակէին ար-
նեն զիմ ժամն. Էլ արհմին յԱստուծոյ և
սրբոցն նորա. ամեն:

ԺԴ. Նույն տեղում, նախորդից ներքև՝ շարունակաբար.

1. Յանուն Աստուծոյ եւ Աշոտ, որդի Գարգե, թոռն Աշոտի և, Գրիգոր, որդի Մարծպանա շինեցաք զՓայտաշեն՝ զկէտըն ի մեր և զկէտն նմա. եւ զիմ բաժինն էտու ի Բարձրաքաշ վասն հոգո
2. ամուսնո իմո Խորիշահի՝ դստեր Աղանա՝ իւր կոպարովն ազատ յամեն չարէ: Եւ խոստացան քսան պատարագ ի տարոջն՝ անախապիան: Արդ, ով խափանել ջանա զինչ տվել եմ՝
3. յիմոց կամ յատարաց, աոցէ նգովս յԱստուծոյ և մեր մեղացն պարտական է առաջի Աստուծոյ: Նոր կիրակէին հետիրար արնեն զժամն որ ի վերագրած է և արհնին յԱստուծոյ:

ԺԵ. Նույն գավթի արևելյան պատի վրա, արտաքուստ.

1. Կաման աստուծոյ, եւ Յովսիպ Ինոք և Բիրց քոյրս
2. տվաք զմեր հոգո բաժին ի սուրբ ուխտս և սպաս-
3. սուրքս էտուն ի տարին երեք ար պատարագել զՔրիստոս
4. մեր յանուն՝ Աւետեաց Աստուածածնին: Ով չառնէ մեր
5. մեղացն տեր է. ամեն:

ԺԶ. Նույն տեղում, նախորդից ներքև.

1. Ողորմութեամբն աստուծոյ, եւ Յակոբ քահանա ետու զիմ
2. այգին յեկեղեցիս, և զիմ ծնողացն միաբանությունն
3. նորոգեցի: Եւ Յովսեփ վարդապետ և միաբանք ետուն երեք պատարագ ի
4. տանի Դավթի և Յեսայես, Աքրահաւոմ...
5. զժամն յետ իմ մահու...

ԺԷ. Նույն գավթի արևմտյան պատի վրա, արտաքուստ, մուտքի հարավային կողմում.

1. Ի ՈՂԶ թվականութեանս Հայոց (1247), եւ յիշխանութեան տիեզերակալ իշխանաց իշխանի Ասագի և Աթապակ
2. Իսանէի, եւ Պոռոշ, որդի Վասակա և թոռն Խաղբակա, միաբանեցա սուրբ ուխտիս Բարձրաքաշիս և ետու շին-
3. ոթեան տանս :Ը: (100) դեկան. եւ սպասուորք սուրբ ուխտիս սահմանեցին մեկ քսանաւորք ժամ տարոջն: Արդ, ով խափանէ զգր-
4. եայս և կամ չարնէ զիմ ժամն, դատի յԱստուծոյ և իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ:

ԺԸ. Նույն տեղում, մուտքի հյուսիսային կողմում.

1. Կաման Աստուծոյ, եւ Սմբատ զիմ հողն տուի
2. ի սուրբ Գրիգորս. վարդապետ Յովսեփ և միաբանքս

3. ետուն, Ա: պատարագ տանի Թէոդ-

4. ոսի: Ով զհողն խլէ ու զժամն խափ-

5. անէ, նգովս աոցէ յԱստուծոյ և մեր

6. մեղացն պարտական է առաջի Աստուծոյ: ԺԹ. Նույն գավթի արևմտյան պատի վրա, արտաքուստ.

1. Եւ Յոհաննէս, մականունն Ծէկ և եղբար որդին իմ
2. Սարգիս, միաբանեցանք և տվաք երկու սուրբ Նշան
3. արծաթի՝ յեկեղեցիս. եւ սպասուորք սուրբ ուխ-
4. տիս խոստացան մեկ ար ամեն եկեղեցիս ի տանի
5. ... պատարագել զՔրիստոս յանուն մեր:
6. Կատարիչքն արհնին յԱստուծոյ. ամեն: Գավթի ներսում
- Ի. Արևելյան արքայի կամարի ճակատի մասում.

1. Թուին ՈՂ. (1241).

2. Եւ Գրիգոր, որդի Մարծպանայ, յետ մահուան հար իմո շինեցի զԳրիգորաշեն և էտու յիմ վանքս. եւ զՍերեկագոմոց տափն և զՄեծ կուռքարն Իգատակի, զՓայտաշինո կէտն, զառագ

3. Սուրբ Նշանն, աւետարան պատուական, գրեան և զարդ եկեղեցո և այլ արդիւնք՝ ի գավթոս: Տիրացու վարդապետ և միաբանքս սահմանեցին զմատուռն որ ի բեմին յաջո կուտէ, անդ պատարա-

4. գել զՔրիստոս յանուն իմ՝ անխափան: Արդ, որ հակառակ կա և զինչ տվել եմ խլէ յեկեղեցոյս՝ յիմոց կամ յատարաց իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ. եւ որ

5. զիմ ժամն խափանէ, դատի յԱստուծոյ: Եւ եւ Գրիգոր էտու Զավանին կէտն և զայգին Մամբանա ամուսնո իմո, և նա

6. ետ յեկեղեցիս առ ի յիշատակ հոգո իւրո: Եւ սպասուորք սուրբ ուխտիս սահմանեցին ի շաբաթն երկու ար պատարագել

7. զՔրիստոս յանուն նորա՝ անխափան: Արդ, որ հաստատ պահէ զառանդս, արհնի յԱստուծոյ, և որ խափանէ՝ դատի. ամեն:

ԻԱ. Հարավային կողմի ստորին խորանի մուտքի վերևում.

1. Եւ Գրիգոր, եղբայր տեառն Համագասպա՝
2. առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատա, միա-
3. բանեցա եկեղեցոյս և շինեցի զմատու-
4. ոռնս արդեամբ իմով. եւ սպասուորք սուրբ ուխտիս
5. խոստացան ինձ հիսուն պատարագ ի տանի սուրբ Գրի-
6. գորի Աղուհացիցն: Կատարիչքն արհնին ի Քրիստոս. ամեն:

ԻԲ. Գավթի հարավային պատի վրա, այդ կողմի վերին խորանի մուտքի կողքին.

1. Ի թվ. ՈՂԱ. (1242). Ողորմութեամբն Աստուծոյ, եւ Սէվնի ծա-
2. ու Մարծպանաւ և ամուսին իմ Կառու շի-նեց-
3. աք զմատուռս և այլ արդիւնք եկեղեցիս
4. տվաք: Տիրացու վարդապետ և միաբան-քըս խոստաց-
5. ան ութ ար պատարագել զՔրիստոս յա-նուն մեր՝ չորսն ինձ
6. և չորսն Կատահին: Դատարիչքն արհ-նեալ եղիցին:

ԻԳ. Նույն տեղում, նախորդի ներքևում-շարունակաբար.

1. Ողորմութեամբն Աստուծոյ և կամակցո-թեամբ իմ պատրոն-
2. ին Գրիգորի, եւ Արդան, որդի Սէվնէ և ամուսին իմ
3. Մամա միաբանեցաք սուրբ ուխտիս և տվաք :Կ:(60) դէկան:
4. Առաջնորդ սուրբ որդիս Երեմիա և Այրա-պետ
5. Էտուն չորս ար պատարագ՝ խաչգիտին՝ երկուսն Ար-
6. դանին՝ իմ աղբարն, մեկն ինձ և մեկը Մամին՝ կատարի:

ԻԴ. Հյուսիս-արևելյան պան խոյակի վրա.

1. Կանկնեցալ սինս և սուրբ նշանքս յի-
2. շատակ Համկանն և Մամբ-
3. անա: Որք երկրպագէք
4. ասացէք-Տեր Աստուած
5. ողորմեաւ անա:

ԻԵ. Հյուսիս-արևմտյան պան խոյակի վրա.

1. Ի թվ. ՈՂԵ (1246). Եւ Զատկեր և Ասա-նէք
2. կանկնեցաք զսուրբ նշանքս և ըստ
3. կարի ազնեցաք տանս:
4. Տիրացու վարդապետ և մի-
5. աբանքս Էտուն
6. մեկ պատարագ
7. Մեզ. Կատարի
8. չքն արհնին
9. յԱստուծոյ. ամեն.

ԻԶ. Հարավ-արևելյան պան խոյակի վրա.

1. Կանկնեցաւ սինս և սուրբ նշանքս յիշ-
2. ատակ Յոհաննէս միակեցին: Որք
3. երկրպագէք ասացէք-Տեր
4. Աստուած ողորմեաւ անա.
5. ամեն:

ԻԷ. Հարավ-արևմտյան պան բնի վրա.

1. կանկնեց-
2. աւ սինս և Խ-
3. աչս յիշ-
4. ատակ Կիկ-
5. տին և ամուսն-
6. ո իւրո. Տեր Աստուած
7. ողորմի անա.

ԻԸ. Գավթի արևելյան պատի վրա, ներ-սից, արսիդի հարավային կողմի խորշի մեջ.

1. Ի թու. ՈՂԵ (1246).
2. Յառաջնորդութեան Տիրացու վարդապե-տին, եւ
3. Քուրդ, որդի Գավկահին, յիմ տապանա-տանն
4. ի դուրս եկի՝ ի Սանահնէն և միաբանեցաւ հար-
5. ձրաքաշիս՝ կամակցութեամբ Գրիգորոս և Ապանպեկա՝ որ-
6. դոց Մարծպանաւ, և ըստ կարի ազնեցի շինութեան
7. տանս և արարի ինձ գերեզմանատուն, և այլ զինչ
8. ունիմ՝ յետ իմ յանցման այս եկեղեցոյս լինի՝ վկա-
9. րութեամբ Աստուծոյ և մարդկան՝ Ապան-պեկա և Գրիգորոս, Համկա և
10. Աշոտոս: Արդ, ով այս գրեղոյս հակառակ կա և խախ-
11. անել ջանա, իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ, Կա-
12. ենի և Յուդայի մասնակից եղիցի: Յի-նացն առ-
13. նեն զիմ ժամն, և արհնին յԱստուծոյ. ամէն:

ԻԹ. Գավթի արևմտյան պատի վրա, ներսից, մուտքի հարավային կողմում.

1. Ի թուի ՈՂԹ (1250). Եւ յառաջնորդու-թեան Տիրացու վարդապետին, եւ Խալի-լան և Կենայ-
2. կից իմ Թամար միաբանեցաք սուրբ ուխ-տիս և ըստ կարի մերում ազն-
3. եցաք տանս և տվաք զմեր հոգոյ բաժինն ի Գաիթս, Եւ
4. Էտուն մեզ յոթ ար պատարագ ի տա-րոջն՝ ի տանի Խաչգի-
5. տին: Արդ, որ չառնէ զմեր ժամն՝ մեր մե-ղացն տէր է առա-
6. ջի Աստուծոյ. եւ որ առնէ՝ արեւնի յԱ-ստուծոյ և յիւր որբոցն. ամէն:

Լ. Նույն տեղում, մուտքի հյուսիսային կողմում.

1. Եւ Մալիքա, դաեակ Խորիշահի՝ դստեր Մարծպանաւ միաբան-
2. եցա եկեղեցոյս. եւ սպասատորքս Էտուն ինձ երկու ար պա-
3. տարագ ի տանի Հոիսիսիմեանց: Կա-տարիչքն արհնին յԱստուծոյ:

ԼԱ. Գավթի հարավային պատի վրա, ներ-սից.

1. Ի թվ. ՈՂԶ (1247).
2. Եւ Սումբա, որդի Սալարին միաբանեցաւ սուրբ ուխտիս և ըստ
3. կարի ազնեցի տանս. եւ սպասատորք սո-րա՝ Տիրացու վարդապետ և միա-
4. բանքս սահմանեցին քսան պատարագ

ինձ ի տարոջն՝ աշխան բառ-
5. սանամտին արնեն գիմ ժամն և արհնին
յԱստուծոյ և ի սրբոց Նորա:
ԼԲ. Նույն տեղ.

1. Ես Սիրապաշտ ետ-
2. ու քսան դեհեկան ի սուրբ
3. եկեղեցիս. ես Տիրացու
4. վարդապետ երես ինձ մի ար
5. ժամ գԱստուածածնի շա-
6. բաթ արն: Կատարիչքն
7. արհնին յԱստուծոյ, ամէն:

Ս. Հարություն դամբարան-մահարձան

ԼԳ. Արևելյան պատի վրա, արտաքուստ.

1. Ի թուիս ՈԾԳ. (1204). Ծինեցաւ սուրբ
Յարութիւնս և կանգնեցաւ մատուռս՝
2. Բարեխաւութիւն վարդապետին Յովա-
3. նիսի և եղբար նորին Սարգսի,
4. յիշխանութեան մեծին Մարծպանս և գա-
5. ւակաց նորա Ասլանբեկ-
4. ին և Գրիգոր, եւ առաջնորդութեան Տի-
5. րացու վարդապետի: Որք երկրպագէք՝
6. զաշխատող սորա յաղաթս յիշեցէք. Եւ
7. Աստուած զձեզ յիշէ. ամեն:

ԼԴ. Վանքի արևմտյան կողմում եղած մի
տապանաքարի վրա.

Թուին 2Ե (1256). Երեմիա սուրբ ծերու-

նի:
Այդ Երեմիան, ամենայն հավանականու-
թյամբ, Բարձրաքաշ ա. Գրիգոր վանքի ա-
ռաջնորդ Երեմիան պիտի լինի, որի մասին
հիշատակվում է զավթի ներսում, հարավա-
յին պատի վրա փորագրված՝ Սեվմո որդի
Արդանի արձանագրության մեջ (արձանա-
գրություն ԻԳ.): Որ այդ Երեմիան վախճան-
վել է խորին ծերության հասակում, այդ ե-
րեվում է նաև նրանից, որ նշված արձանա-
գրության մեջ, բացի Երեմիայից, վանքի ա-
ռաջնորդ է հիշվում նաև Հայրապետը: Ինչ-
պես պարզվում է ուսումնասիրություններից,
վանական կյանքում ընդունված կանոն է
եղել, որ վանքի՝ խորին ծերության հասած
առաջնորդները կա՛մ վանքի առաջնորդու-
թյունը հանձնարարել են մեկ ուրիշին, կա՛մ
ունեցել են իրենց օգնականները: Տվյալ
դեպքում երկուսն էլ հավասարաչափ հա-
մարվել են վանքի առաջնորդներ, ինչպես
այդ տեսնում ենք նաև հիշյալ արձանագրու-
թյան մեջ:

ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆԷ

ԼԵ. Արևմտյան պատի վրա, արտաքուստ.

1. Ողորմութեամբն Աստուծոյ եւ Խաչատուր
ծառ-
2. ալ Աստուծոյ շինեցի գծամատունս և
3. սալեցի զեկեղեցիս՝ միաբան-
4. քս խոստացան ի տանի սուրբ Յովա-
5. նու :Գ: պատարագ Սարգսի և մար իւ-
6. րոյ Մալքային և ինձ մեղուցեղոյ-

7. ա: Կատարիչքն արհնին յԱստուծոյ. որ
խափանէ՝

8. դատի:

ԼԶ. Հարավային պատի վրա, արտաքուստ.

1. Յանուն Աստուծոյ եւ Քերոքս և ամուսին
իմ Թագունի
2. մեծաւ յուսով միաբանեցաք վանացս և
զինչ
3. մեր հոգո պաշար կայր տուաք լեկեղեցիս.
միաբանքս
4. և առաջնորդ տեղոյս խոստացան մեզ :Բ:
ար ժամ գտուրք Սարգ-
5. իսն: Ով խափանէ մեր մեղացն տեր է ա-
6. ռաջի Աստուծոյ:

ԼԷ. Նույն տեղ, նախորդից արևելք.

1. Յանուն Աստուծոյ եւ Ազատշահս միա-
2. քանեց-
2. ա վանացս և ետու զԾովատեղացն հողն
և ալլ
3. զիմ հոգո պաշարն. եւ Յովանէս առաջ-
4. նորդ
4. տեղոյս և ալլ միաբանքս ընկալաք և
տուաք :Գ: ժամ ի
5. սուրբ Քառասնից տանին: Ով խափանէ
սատանայի մասնակից է:

ԼԸ. Նույն տեղ, նախորդից ներքև.

1. Ես Գրիգոր ծառա Աստուծոյ ան-
2. յիշատակ գոյով ի չքաորութ-
3. եմէ ընչից, միաբանեցա եկեղե-
4. ցոյս և սպասաւորք սորա խոս-
5. տացան ի տարին :Ա: պատարագ ի տ-
6. անի սուրբ Գրիգորին: Կատարիչքն
7. արհնին յԱստուծոյ: Եւ ով խափանէ զա-
8. նէ-

8. ծս Յուդայի և զԿանեհին աղէ:

ԼԹ. Նույն տեղ, նախորդի ներքևում.

1. Ես դարբին Միխթար մի-
2. աքանեցա եկեղեցոյս՝
3. եւ արհնին ինձ :Ա: ժամ ի տա-
4. ւնի սրբոյն Գեորգա: Ով
5. խափանէ՝ դատի յԱստուծոյ:

ՁԲիավեր հողէ :ԺԲ: օր ամէն գլխի:

Խ. Մուսքի ճակատակալ քարի վրա.

Ի թուիս 2Ե (1256). ողորմութեամբն Աս-
տուծոյ եւ Տեր Համազասպ՝ առաջնորդ
սուրբ ուխտի Հաղբատայ արհնեցի զեկեղե-
ցիս և տուի զգեղ ժողովորդ՝ կամակցու-
թեամբ Հաղբատայ միաբանացն՝ առաջնոր-
դութեամբ Գեորգ վարդապետի. եթէ ոք յա-
ռաջնորդաց կամ իշխանաց հակառակի և
հանէ եկեղեցոյս, եղիցի նզովեալ :ՅԺԸ:
հայրապետացն. եղիցի, եղիցի:

ԽԱ. Արևմտյան պատի վրա, արտաքուստ.

Ծնորհիւն Աստուծոյ եւ Վահրամ միաբա-
նեցաւ սուրբ Քառասնիցս և զանձագին ա-
րարաք գտուրք զանտարանն և տվաք ի Քա-
ռասունքս՝ վասն փրկութեան հոգոց մերոց:
Հայրապետն և միաբանքս հաստատեցին

գջրարմենք անոր պատարագն մեզ պատարագել զամեն եկեղեցի.
թուին 216 (1276):

ԽԲ. Նույն տեղ, նախորդի ներքևում.

Կաման Աստուծոյ և հրամանաւ պարունացն և Դանիին եւ Զամալարինս միաբանեցաւ սուրբ Քառասնիցս և ետու զիմ հոգւոյ պաշարն և առի զԼամիշկուտի հողն, և ետու ի վանքս՝ առաջնորդութեան Հայրապետիս. և նոքա ետուն ի մեռելոց զամեն եկեղեցին: Ով հողս իւր կամ զժամն խափանէ, իմ մեղացն տէր է:

ԽԳ. Հարավային ստորին խորանի մուտքի վերևում.

Եւ Աշոտ և ամուսին իմ Եւէ միաբանեցաւ և մեր հոգոյ պաշարն եկեղեցույս շինութեան տվաք. Առաքել վարդապետ և այլ միաբանքս ընկալան և հաստատեցին զԱստուածածնի արն զամեն եկեղեցիքս պատարագել զՔրիստոս՝ յանուն մեր: Կատարիչք արհմին յԱստուծոյ:

ԽԴ. Նույն տեղ

Կաման Աստուծոյ եւ իսաչգունդ գԾողիկայ հողն տվի իմ եղբար հոգոյն իսաչերեսին, և սոքա խոստացան մեկ պատարագ զնոր կիրակէին. ով զայն հողն յայս տեղւոյս հանէ և զիմ ժամն խափանէ՝ դատի յԱստուծոյ:

ԽԵ. Նույն խորանի մուտքի ձախ կողմում.

Ի թուին ՈՂ (1241). Յիշխանութեան Աշոտոյ և յառաջնորդութեան Յոհաննէսի եւ

Դավիթ ... առաջի ընծայ բերի և շինեցի զտունս, և սպասատրք սորա խոստացան ի տարին :Բ: պատարագ. որք խափանեն դատին ի Տեառնէ. կատարիչք արհմին յԱստուծոյ:

ԽԶ. Գրիգորի խաչքար-մահարձանի կամ «Խաչելոյցան խաչքարի» տապանագրությունը.

Ի թվ. 22 (1281). Ողորմութեամբն Աստուծոյ, եւ Տէրունս, որդի իսալլին իմ աղբերացոյս կանգնեցի զխէչս յանուն Գրիգորոյ որ զուր և դառն մահուամբ ի Քրիստոս փոխեցաւ, որք երկրպագէք յաղարթս յիշեցէք: Վարհամ յիշեցէք:

ԽԷ. Տէրունական կամ Սիրուն-խաչ մահարձանի տապանագրությունը

Յիշխանութեանն Մամիկոնեան և որդւոյ նորա Վարդանս եւ Հայրապետս, որդի Թերին կնգնեցի սուրբ Տէրունականս յիշատակ ինձ և Ասլանբեկին և ծնողաց մերոց. որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս:

² Վերջին վեց (Խ—ԽԵ) արձանագրությունները տեղում խիստ հողմնաճարված ու եղծված լինելու պատճառով մեջ ենք բերում Ա. Զալալյանից.—Մանապարհորություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Թիֆլիս, 1842 թ.:

³ Ազգագրական հանդես. գիրք VII—VIII, Թիֆլիս, 1901, էջ 349:

⁴ Նույն տեղ, էջ 424:

